ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<26>> հուլիսի 2013թ. N274

Ք.Արմավիր

*ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի բնակիչ Խաչատուր Պետրոսյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2013 թվականի հունիսի 20-ի եզրակացությունը

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Խաչատուր Պետրոսյանին հատկացնել 30000 /երեսուն հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

3010

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի ՍԾՏԳ-ի կողմից Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի բնակիչ Խաչատուր Արշակի Պետրոսյանի ընտանիքի սոցիալական վիճակի ուսումնասիրությունից պարզվեց հետևյալը.

Խաչատուր Պետրոսյանը ապրում է կնոջ և անչափահաս տղայի հետ իր սեփական տանը: Կինը աշխատում է դպրոցում, ստանում է 79000դր աշխատավարձ, տղան մանկուց հաշմանդամ է, ստանում է 18200դր, իսկ ինքը երրորդ խմբի հաշմանդամ է և ստանում է 22000դր թոշակ:

Ընտանիքը՝ համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու դեպքում, 2013թ. հունիս ամսին կհաշվառվի Արմավիրի ՍԾՏԳ-ում;

Արմավիրի ՍԾՏԳ-ի ՊԵՏ՝ Ռ.ԱՐՏԵՆՅԱՆ

կատարող Ռ. Ավագյան

20.06.2013